ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«_____» ___________________ *2016թ.* **N**___________________

## ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N183 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ 2016» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1294-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը`

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

**1.** ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հուլիսի 15-ի «Երևանյան ճարտարապետական բիենալե» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու ու «Երևանյան ճարտարապետական բիենալե 2014» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման մասին» N183 հրամանի N1 հավելվածի`

**1)** 4-րդ կետում «(այսուհետ` Կազմակերպիչ)» բառերից հետո լրացնել «, համագործակցելով Հայաստանի ճարտարապետների միավորման հետ» բառերը, իսկ «info@mud.am» բառերը փոխարինել «info@minurban.am» բառերով,

**2)** 7-րդ կետի 3-րդ ենթակետում «ցուցադրումը» բառը փոխարինել «ցուցահանդեսը» բառով:

**2.** Հաստատել «Երևանյան ճարտարապետական բիենալե 2016» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի անցկացման ծրագիրը` համաձայն հավելվածի:

**3.** ՀՀ քաղաքաշինության նախարարի մամուլի քարտուղար Ա.Եսայանին` ապահովել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հուլիսի 15-ի N183 հրաման N1 հավելվածի 5-րդ կետի 6-րդ ենթակետի կատարումը:

Նախարար`

**Ն. ՍԱՐԳՍՅԱՆ**

«_____» _______________ 2016թ.

*ք.Երևան*

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության նախարարի
2014 թվականի հուլիսի 15–ի
N 183 հրամանի

# ԿԱՐԳ

## «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Երևանյան ճարտարապետական բիենալե» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի (այսուհետ՝ Բիենալե) կազմակերպման և անցկացման կարգը:

2. Բիենալեի անցկացման նպատակն է՝ Հայաստանի և Սփյուռքի հայ ազգի ճարտարապետների ներուժի, գիտական և ստեղծագործական մտքի համախմբումը, ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառներում միջազգային համագործակցության խթանումը, հայ ճարտարապետական ժառանգության հանրահռչակումը, մասնագիտական ուսուցման և միջազգային համագործակցության դաշտում մրցունակության բարձրացումը:

3. Բիենալեն անցկացվում է երկու տարին մեկ անգամ՝ Երևանում: Բիենալեի հանդիսավոր բացումը տեղի է ունենում ճարտարապետության համաշխարհային օրը:

4. Բիենալեի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը (այսուհետ՝ Կազմակերպիչ), համագործակցելով Հայաստանի ճարտարապետների միավորման հետ: Կազմակերպչի հասցեն է՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 (e-mail: info@minurban.am):

5. Կազմակերպիչը՝

1) հայտարարում է հերթական Բիենալեի անցկացման, մասնակցության հայտերի և նյութերի ներկայացման ժամկետների մասին.
2) ստեղծում է Բիենալեի աշխատանքների կազմակերպման և անցկացման տնօրինություն.
3) նշանակում է Բիենալեի հանձնակատար.
4) սահմանում է Բիենալեի անվանակարգերը.
5) ստեղծում է Բիենալեի մրցութային հանձնաժողով (ժյուրի).
6) լուսաբանում է միջոցառման ընթացքը և արդյունքները:

6. Բիենալեի աշխատանքների կազմակերպման և անցկացման տնօրինությունն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Տնօրինություն): Տնօրինության հասցեն է՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 (e-mail: armarchmuseum@gmail.com, ashothaykazun@gmail.com):

7. Տնօրինությունը՝

1) ստեղծում է Բիենալեի կազմակերպման և անցկացման աշխատանքային խումբը.
2) նախապատրաստում է Բիենալեի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվող միջոցառումները (Բիենալեի հանդիսավոր բացում. մրցութային հանձնաժողովի աշխատանք, մրցանակների հանձնում, մամլո ասուլիս, դասախոսություններ, վարպետաց դասեր, քննարկումներ և այլն).
3) ձևավորում է ցուցահանդեսը.
4) հրատարակում է Բիենալեի կատալոգը:

8. Բիենալեի հանձնակատարն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը:

9. Հանձնակատարը՝
1) մշակում և Կազմակերպչի հաստատմանն է ներկայացնում Բիենալեի ծրագիրը.
2) համակարգում է Բիենալեի կազմակերպման և անցկացման աշխատանքների ընթացքը.
3) իրականացնում է Բիենալեին ներկայացված ցուցադրանյութերի ընտրությունը:

10. Բիենալեին կարող են ներկայացվել հերթական Բիենալեին նախորդող տարիների ընթացքում նախագծված կամ իրականացված քաղաքաշինական օբյեկտների/համալիրների (բնակելի, հասարակական, արտադրական շենքեր), ինտերյերների, ճարտարապետական փոքր ձևերի, բարեկարգման և այլ նախագծեր, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներ, հոդվածներ, ֆիլմեր, գրքեր, մենագրություններ և այլն:

11. Բիենալեին կարող են մասնակցել Հայաստանի և Սփյուռքի հայ ազգի ճարտարապետներ, ճարտարապետական արվեստանոցներ, հեղինակային խմբեր, այդ թվում՝ ճարտարապետական ԲՈՒՀ-երի ուսանողներ (այսուհետ՝ Մասնակից):

12. Մասնակիցը՝
1) Տնօրինությանն է ներկայացնում մասնակցության հայտ (համաձայն սույն կարգին կից Ձևի) կոնկրետ անվանակարգի համար.
2) ընտրում է ցուցադրությունների ներկայացման համար անհրաժեշտ մակերեսը (1-4 քառ. մետր) և ցուցադրական վահանակի չափը (80x120 սմ՝ ըստ ուղղահայաց ցուցադրանքի)՝ մեկ աշխատանքին մեկ վահանակ հաշվարկով.
3) իրականացնում է ցուցադրանյութի պատրաստումը և ձևավորումը (վահանակ, մանրակերտ, ֆիլմ և այլն).
4) գրավոր հաստատում է Բիենալեի Կատալոգում իր աշխատանքի ներառումը, նշում ներկայացվող նյութի մատուցման ձևը և նշված նյութը էլեկտրոնային կրիչով տրամադրում Տնօրինությանը՝ Կազմակերպչի կողմից հայտարարված ժամկետներում:

13. Մասնակցի ցանկությամբ ցուցադրանյութերի ձևավորման, տպագրության, դրանց տեղադրման և ապամոնտաժման աշխատանքները կարող են իրականացվել Տնօրինության կողմից:

14. Բիենալեի մրցանակակիրների ընտրության նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմում ընդգրկվում են Հայաստանի և Սփյուռքի անվանի ճարտարապետներ և ճարտարագետներ:

15. Հանձնաժողովը սահմանված ժամկետում ուսումնասիրում և քննարկում է Բիենալեին ներկայացված աշխատանքները, ամփոփում Բիենալեի արդյունքները և Հանձնաժողովի անդամների առնվազն երեք քառորդի ներկայությամբ կայացնում որոշում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

16. Բիենալեի անվանակարգերն են.

1) լավագույն հասարակական/արտադրական շենք (բազմաֆունկցիոնալ համալիր).
2) լավագույն բնակելի շենք (բազմաբնակարան բնակելի տուն, մենատուն),
3) լավագույն ինտերյեր.
4) ճարտարապետական փոքր ձևեր.
5) պատմաշակութային հուշարձանի վերականգնում.
6) հայկական ճարտարապետության և հայ ճարտարապետների մասին տպագիր հրատարակություն, ֆիլմ.
7) երիտասարդ մասնակից (մինչև 35 տարեկան, այդ թվում՝ ճարտարապետական ԲՈՒՀ-երի ուսանողներ):

17. Սույն կարգի 16-րդ կետով սահմանված անվանակարգերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրավողներին տրվում են Բիենալեի դափնեկրի դիպլոմներ:

18. Բիենալեի դափնեկրի 1-ին կարգի դիպլոմ ստացած մասնակիցը ստանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ոսկե մեդալ:

19. Սույն կարգի 18-րդ կետում նշված ոսկե մեդալ ստացած դափնեկիրներից (բացառությամբ՝ սույն կարգով սահմանված 16-րդ կետի 7-րդ ենթակետում նշված մասնակիցների) ընտրվում է Բիենալեի բացարձակ հաղթողը, որին հանձնվում է Բիենալեի բարձրագույն պարգևը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Հայաստանի ճարտարապետների միավորման կողմից հիմնված «Ալեքսանդր Թամանյանի» ոսկե մեդալը (Գրան Պրի):

20. Ճարտարապետական արվեստանոցին կամ հեղինակային խմբին պարգևատրելու դեպքում՝ սույն կարգի 18-րդ և 19-րդ կետերով սահմանված պարգևները հանձնվում են ճարտարապետական արվեստանոցի կամ հեղինակային խմբի ղեկավարին, իսկ դրանց մյուս անդամներին կարող են տրվել պարգևատրման մասին վկայականներ:

21. Բիենալեի բոլոր մասնակիցներին հանձնվում են մասնակցության դիպլոմներ: Առանձին մրցանակներ և պատվոգրեր

կարող են շնորհվել մրցույթի կազմակերպիչների, հովանավորների և այլ կազմակերպությունների կողմից:

22. Բիենալեին ներկայացված բոլոր աշխատանքները (բացառությամբ` ուսանողական աշխատանքների) ներառվում են Բիենալեի կատալոգում: Բիենալեի բոլոր մասնակիցներին հանձնվում է կատալոգի մեկական օրինակ:

23. Բիենալեի արդյունքների հրապարակումը և մրցանակների հանձնումը կատարվում են հանդիսավոր պայմաններում:

24. Բիենալեի միջոցառումների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Բիենալեի հովանավորների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

25. Մրցույթին ներկայացված աշխատանքները, արդյունքներից անկախ, ի պահ են տրվում «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

# ՀԱՅՏ
## «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ 2016»
## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

______________________________________________________________
անհատ մասնակից (անուն, ազգանուն)/կազմակերպություն (անվանում),

ի դեմս՝
______________________________________________________________
պաշտոն, անուն, ազգանուն (կազմակերպությունների համար)

ցանկանում եմ մասնակցել «Երևանյան ճարտարապետական Բիենալե - 2016» համահայկական մրցույթ-ցուցահանդեսին հետևյալ անվանակարգում՝

☐ հասարակական/արտադրական շենք (բազմաֆունկցիոնալ համալիր)

☐ բնակելի շենք (բազմաբնակարան բնակելի տուն, մենատուն)

☐ ինտերյեր

☐ ճարտարապետական փոքր ձև

☐ պատմամշակութային հուշարձանի վերականգնում

☐ հայկական ճարտարապետության և հայ ճարտարապետների մասին տպագիր հրատարակություն, ֆիլմ

☐ երիտասարդ մասնակից (մինչև 35 տարեկան, այդ թվում՝ ճարտարապետական ԲՈՒՀ-երի ուսանողներ)

Ներկայացնում եմ ________ վահանակ,

________ մանրակերտ,

________ ֆիլմ,

________ տպագիր նյութ,

այլ ______________________________________________ :

(նշել ներկայացվող նյութերի անվանումը)

Հասցե ______________________________________________

հեռ. ____________________ ֆաքս ____________________

e-mail ____________________

Հայտատու ______________________________ ____________________
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

**Կ.Տ.**
(իրավաբանական անձանց համար)

«_____» __________________ 2016 թ.